Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

139 N 369
С1926 N 573

Библиотека Российской Академии Наук

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՐԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՄ ՊԵՏՔԵՐՈՎ ՀՐՄԱՎՐՈՍՏՆԵՐՆ

«ԾԵՐԿՈՒՄՍ»-Ի

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ИЗУЧЕНИЯ ЗАПАДА
Академии Наук
СССР

374.6(47.93)
4-21

«ԾԵՐԿՈՒՄՍ»-Ի ՀՐԱՏԱՐ.

1926.

Главлит № 63. Тифлис Тираж 500

Թիֆլիս, Ժ. Տ. Գ. Խ. Գ. Տր. 4-դ տպ. Պուշկի. փ. № 3

Ս
Ս 213 11
374.6(47.93)
4-21
120-10

Սույն կանոնագրությունը հաստատված է Վ. Ս. Խ. Հ. Ժող. Կոմիսարների կողմից 1925 թվի հոկտեմբերի 14-ին։

Վ. Ս. Խ. Հ. Ժող. Կոմիսարների Խորհրդի գործերի վարիչ՝ Ա. Սալարիձե

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՂ ՀԱՄԱՎՐՈՍՏԱՆՅԱՆ

«ԺԵՐԿՈՒՄՍԻ»

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

1. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 1. Անգրագիտության դեմ պայքարող Համավրոստանյան Ընկերության նպատակն է աջակցել քաղաքական լուսավորության Գլխավոր Խորհրդին, սրա՝ արտադպրոցյան կրթության համար վարած աշխատանքում, ընդսմին Ընկերությունն իր աշխատանքի առաջին տարիներում նվիրում է առավելագույն ուշադրությունը անգրագիտության վերջ տալուն, տեսնելով այդ բանում հիմնական ետապներից մեկը յերկրի տնտեսական և կուլտուրական զարգացման և նրա մեջ Խորհրդային Հասարակականության ամրապնդման ճանապարհի վրա։

17 MAY 2013

53.591

§ 2. Ընկերության գործողության ոլորտը տարածվում Վրաստանի ամբողջ տերիտորիայի վրա, բացառությամբ ավտոնոմ հանրապետությունների։

§ 3. Իր նպատակներին հասնելու համար անգրագիտության դեմ պայքարող Ընկերությունը՝

ա) բաց է անում իր հաշվով անգրագիտության դեմ պայքարող դպրոցներ, կազմակերպում է անհատական ու խմբական ուսուցում, մտցնելով դրանց դավառային քաղաքական լուսավորության հիմնարկությունների ընդհանուր ցանկը։

բ) Կազմակերպում է այնպիսի դասախոսություններ, զրույցներ, ցուցահանդեսներ, որոնք կապ ունեն անգրագիտության վերջ տալու և արտադպրոցյան կրթության հարցերի հետ։

գ) Միջոցներ և ձեռք առնում հանրամատչելի դարձնելու Վրաստանում ապրող բոլոր ժողովուրդների մեջ այն գաղափարը, թե անհրաժեշտ է, որ ամենքը լինեն գրագետ։

դ) Անգրագիտության կրկնվելու առաջն առնելու և սովորողների ընդհանուր զարգացման համար բաց է անում հանրակրթական դպրոցներ նվազ-գրագետների համար, մտցնելով նրանց քաղաքական լուսավորության Գլխավոր Վարչության դպրոցների ցանկը։

յե) Կազմակերպում է կարմիր անկյուններ, խրճիթ-ընթերցարաններ, գրադարաններ մտցնելով դրանց դավառային քաղաքական լուսավորության հիմնարկությունների ընդհանուր ցանկը։

զ) Մատակարարում է գոյություն ունեցող կարմիր անկյուններին, գրադարաններին, խրճիթ-ընթերցարաններին և անգրագիտությունը վերացնող դպրոցներին գրքեր, լրագիրներ, ժուրնալներ և այլն։

ՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՈ-Арм.ССР

58917-67

է) Կազմակերպում և ուսման ձեռնարկների և հանրամատչելի գրքույկների հրատարակություն՝ գյուղացիների, բանվորների և կարմիր բանակայինների համար։

ը) Հիմնում է Վրաստանի սահմաններում անգրագիտության դեմ պայքարող ընկերության բաժանմունքներ։

թ) Միջոցներ և ձեռք առնում, որպեսզի նյութական միջոցներ գտնե անգրագիտության վերջ տալու գործը վարելու և քաղաքական լուսավորության Գլխավոր Վարչության՝ արտադպրոցյան կրթության վերաբերությամբ ունեցած ամբողջ գործունեության համար։ Նա այդ նպատակով՝

ժ) բաց է անում խանութներ ու պահեստներ,

ի) բաց է անում կինո,

լ) կազմակերպում է ներկայացումներ, դասախոսություններ, զրույցներ, վիճակախաղ և այլն։

§ 4. Ներկա կանոնագրության հաստատվելու և ցուցակագրվելու որից անգրագիտության դեմ պայքարող ընկերությունը ձեռք է բերում հետևյալ իրավունքները—վարձում է ու ձեռք բերում իրրև սեփականություն ամեն տեսակ գույք, կնքում է պայմանագիրներ, անում է փոխառություններ, տալիս է պարտավորություններ, ստանում է ու տալիս մուրհակներ, օգտվում է պետական ու վարչային հիմնարկություններից, հարաբերություններ պահպանում պետական և հասարակական հիմնարկությունների հետ, ուրիշների դեմ դատ է վարում և ինքը պատասխանատվության յենթարկ-

վում դատարանում և կատարում է այն բոլոր գործողությունները, որոնք բղխում են սույն կանոնադրությունից։

§ 5. Իր պարտավորությունների վերաբերությամբ Ընկերությունը պատասխանատու չէ լինում իր ամբողջ գույքով ու կապիտալով։

§ 6. Ընկերությունը պատասխանատվություն է կրում իր տեղական բաժանմունքների պարտքերի և պարտավորությունների վերաբերությամբ։ Տեղական բաժանմունքներն իրենց պարտքերի ու պարտավորությունների վերաբերությամբ պատասխանատվություն են կրում իրենց գույքով ու կապիտալով։

§ 7. Ընկերությունը կրում է հետևյալ անունը— Անգրագիտության դեմ պայքարող Համավրասասանյան «Ծերկումսի» Ընկերություն։

§ 8. Ընկերությունն ունի կնիք, որի վրա նշանակված է իր անունը։

II. ԱՆԴՐԱԴԻՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ

Նրա անդամների իրավունքները ու պարտավորությունները

§ 9. Ընկերության անդամ կարող են լինել յերկու սեռի, 18 տարին լրացրած այն քաղաքացիները, որոնք իրավունքներ են վայելում և անվանարկված չեն դատարանի վճռով, ինչպես նաև իրավաբանական անձինք։

Ծանոթ.—Իրավաբանական անձինք Ընկերության աշխատանքին մասնակցում են իրենց ներկայացուցիչների միջոցով։

§ 10. Ընկերության անդամները պարտավոր են, բացի նյութական ոգնություն հասցնելուց, ակտիվ կերպով մասնակել Ընկերության աշխատանքին։

§ 11. Ընկերության մեջ անդամներ ընդունելը կատարում է ընդհանուր ժողովը բաց քվեարկությամբ և ձայների հասարակ մեծամասնությամբ։

Ծանոթ. — Բանվորների, ծառայողների և գյուղացիների միացումները կարող են մտնել Ընկերության մեջ խմբովին (коллективно).

§ 12. Ընկերության անդամներն իրենց մտնելու միջոցին վճարում են մուտքի և անդամակցական (պարբերական) մուծումները Ընկերության Համագումարի որոշած չափով ու ժամանակում։

§ 13. Բոլոր անդամները պարտավոր են պահպանել Ընկերության կանոնադրությունը։

§ 14. Ընկերության անդամները վճռող ձայնի իրավունք ունեն ընդհանուր ժողովում, իրավունք ունեն ընտրել և ընտրվել Ընկերության բոլոր ընտրական տեղերի համար։

§ 15. Ընկերության անդամները համարվում են հեռացած՝

ա) յեթե իրենք կամավորաբար հեռանան,

բ) յեթե չվճարեն անդամակցական մուծումները Ընկերության կողմից սահմանված ժամանակի ընթացքում,

գ) յեթե արտաքսվեն ընդհանուր ժողովի $^2/_3$ ձայների որոշումով, որպիսի որոշումը կարող է անվել այն ժամանակ միայն, յերբ հեռացվող անձը ցուցադրած լինի Ընկերությունն անվանարկող վարմունքներ

կամ քրեականապես պատժի յենթարկվող գործողություններ։

§ 16. Ընկերության անդամներն իրավունք ունեն կրել սահմանված ձևի նշանակ։

III. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

§ 18. Ընկերության միջոցները կազմվում են՝

ա) անդամակցական մուծումներից,

բ) կառավարական և հասարակական կազմակերպությունների տված նպաստներից, ինչպես նաև արված նվերներից,

գ) զանազան զվարճական հանդեսներից, դասախոսություններից և այլն ստացվող հասույթներից,

դ) Ընկերության առևտրա-շահագործական բաժանմունքի մուտքերից,

ե) պատահական յեկամուտներից։

Մատնանշված միջոցները ծախսվում են Ընկերության համագումարի կողմից հաստատված նախահաշվով։

IV. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Ա. Համագումար

§ 19. Ընկերության գործերը վարում են՝ Համավրաստանյան Համագումարը, Կենտրոնական Վարչությունը, Վերաստուգիչ Հանձնաժողովը։

§ 20. Ընկերության համագումարները լինում են՝ ա) հերթական, վորոնք հրավիրվում են Վարչության կողմից տարեկան վոչ պակաս, քան մի անգամ բ) արտակարգ, վորոնք հրավիրվում են պետք յեղած միջոցին Վարչության կողմից կամ Ընկերության անդամների ընդհանուր թվի $^1/_5$-ի գրավոր պահանջով, կամ Վերաստուգիչ հանձնաժողովի պահանջով։ Ընկերության Կենտրոնական Վարչությունը պարտավոր է՝ այդպիսի պահանջ ստանալուց հետո՝ հրավիրել համագումար մի ամսվա ընթացքում. հակառակ դեպքում վերջինը հրավիրվում է Վերաստուգիչ Հանձնաժողովի կողմից։

§ 21. Համագումարը լիազոր է համարվում, յեթե այնտեղ ներկա յե Ընկերության բոլոր անդամների վոչ-պակաս, քան $^1/_5$-ը։ Կանոնադրության փոփոխման հարցը լուծելու համար պահանջվում է բաժանմունքների այնքան ներկայացուցիչների ներկա լինելը, վորոնք կարողանան միացնել Ընկերության բոլոր անդամների վոչ-պակաս, քան $^1/_3$-ը։

§ 22. Տեղական բաժանմունքների ներկայացուցչության նորմաները համագումարում սահմանվում են Կենտրոնական Վարչության կողմից՝ անդամների թվի համեմատ։

Բ. Կենտրոնական Վարչությունը

§ 23. Ընկերության Կենտրոնական Վարչությունն ընտրվում է Ընկերության համագումարի կողմից վոչ-պակաս, քան 25 անդամից բաղկացած կազմով։ Կենտրոնական Վարչությունն ընտրում է իր միջից Նախագահություն՝ վոչ-պակաս, քան 7 անդամից ու թեկնածուից բաղկացած կազմով։ Նախագահության մեջ մտնում են՝ նախագահը, 2 անձնափոխանորդները, քարտուղարը և նախագահության մյուս անդամները։

§ 24. Կենտրոնական Վարչությունն են մտնում վճռական ձայնի իրավունքով քաղաքական լուսավորու-

թյան Գլխավոր Վարչության և նրա դպրոցական բաժանմունքի վարիչները։

§ 25. Վարչության անդամների թեկնածուները կարող են մասնակցել Վարչության նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով։

§ 26. Կենտրոնական Վարչությունն ընտրվում է մինչև հետևյալ համագումարը։

§ 27. Վարչության անդամներից մեկի հեռանալու դեպքում նրա տեղը գրավում է առաջին թեկնածուն ըստ ցուցակի։

§ 28. Կենտրոնական Վարչության նիստերը կայանում են ամսական վոչ պակաս, քան մի անգամ և համարվում են կայացած, յեթե նրանց մեջ մասնակցում է Վարչության կազմի վոչ—պակաս, քան կեսը։

§ 29. Վարչության վորոշումները մտնում են առանձին արձանագրության մեջ և ստորագրվում նախագահի և քարտուղարի կողմից։

§ 30. Կենտրոնական Վարչության վրա դրված են հետևյալ պարտականությունները.

ա) հոգալ, վոր ընկերությունը հնարավոր չափով հասնե իր նպատակներին,

բ) վարել ընկերության գործերն ու հիմնարկությունները,

գ) նշանակել ու արձակել պաշտոնատար անձերին,

դ) կազմակերպել ընկերության հաշվապահության և գործավարության վարումը,

յե) հսկել կանոնադրության ի կատար ածվելու, անդամական մուծումների հավաքվելու և ընկերության գործունեության համար անհրաժեշտ ծախսերի կատարվելու վրա՝ Համագումարի կողմից հաստատված սահմանում,

զ) հարաբերություն պահպանել պատշաճավոր իշխանությունների և հիմնարկությունների հետ,

ե) կազմել՝ համագումարին ներկայացնելու համար՝ հաշվետվություն ընկերության գործունեության մասին, դրամական հաշվետվություն անցած տարվա համար, գործունեության նախագիծ և նախահաշիվներ՝ սկսվող ժամանակաշրջանի համար,

ը) քննության առնել ընկերության անդամների արած հայտարարությունները,

թ) նախորդք մշակել այն բոլոր հարցերը, վորոնցով պետք է զբաղվի համագումարը,

ժ) ի կատար ածել համագումարի բոլոր վորոշումները,

ի) ընդունել, տալ և պահել գումարներն ու այլ գույքերը,

լ) կնքել ընկերության անունից ամեն տեսակ պայմանագրներ և այլն,

խ) ընդունել և տալ մուրհակներ և ոգտվել վարկից,

ծ) տալ և ընդունել պարտավորություններ,

կ) վարել ընկերության բոլոր գործերը։

§ 31. Ընկերության կողմից տրվող մուրհակներն ու այլ պարտավորությունները ստորագրել պարտավոր է ընկերության նախագահը կամ նախագահության անդամներից մեկը՝ վերջինի վորոշմամբ։

Ա. Կենտրոնական Վերաստուգիչ Հանձնաժողով.

§ 32. Ընկերության գործերը քննելու համար Համագումարն ընտրում է Վերաստուգիչ Հանձնաժողով;

վորի կազմը մտնում է վոչ—պակաս, քան յերեք անձ և յերկու թեկնածու՝ մինև հետևյալ Համագումարի կայանալը։

(Վերաստուգիչ Հանձնաժողովի անդամներն ընտրում են իրենց միջից հանձնաժողովի նախագահին)։

§ 33. Վերաստուգիչ հանձնաժողովը՝

ա) հետևում է հաշվետվության ճշտության և ընկերության գույքի դրության,

բ) հետևում է, վոր ընկերության անդամները և Վարչությունը պահպանեն կանոնադրությունը,

գ) նախապատրաստում է հաշվետվություններ Համագումարի համար,

դ) հրավիրում է համագումար, յեթե Վարչությունը չհրավիրե այն սահմանված դեպքերում։

§ 34. Վերաստուգիչ Հանձնաժողովի նիստերին կարող է մասնակցել վճռող ձայնի իրավունքով քաղաքական լուսավորության Գլխավոր Վարչության ներկայացուցիչը։

Վ. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ.

§ 35. Տեղական բաժանմունքներ առաջանում են կամ կենտրոնական Վարչության նախաձեռնությամբ կամ տեղական կուսակցական կազմակերպությունների և խորհրդային հիմնարկությունների նախաձեռնությամբ և այդ մասին ծանուցվում է ընկերության կենտրոնական Վարչության։

§ 36. Տեղական բաժանմունքները պարտավոր են պահպանել ներկա կանոնադրությունը։

§ 37. Տեղական բաժանմունքներն ըստ գործունեության ռայոնների լինում են գավառական, ռայոնական (քաղաքներում) և թեմական։

Ծանոթություն. Ռազմական մասերը կարող են կազմակերպել իրենց բաժանմունքները և կապել նրանց անմիջապես ընկերության կենտրոնական կոմիտեի հետ։

§ 38. Տեղական բաժանմունքները կազմակերպվում են և աշխատում ընկերության Վարչության կողմից՝ նրա կանոնադրության հիման վրա մշակված հրահանգի կարգով։

§ 39. Տեղական բաժանմունքների մարմիններ հանդիսանում են կոնֆերենցիան և նրանից ընտրված Վարչությունն ու Վերաստուգիչ Հանձնաժողովը։

§ 40. Տեղական բաժանմունքների վարչություններին իրավունք է տրվում հրավիրել՝ կենտրոնական Վարչության համաձայնությամբ՝ ավելի ներքև գտնվող բաժանմունքների ներկայացուցիչների կոնֆերենցիաներ և վճռել այն հարցերը, վորոնք վերաբերում են աշխատանքի տեղական պայմաններին։ Այդ համագումարներում լինելիք ներկայացուցչության նորմաները մշակում է այն բաժանմունքի վարչությունը, վորը հրավիրում է համագումար։

§ 41. Ընկերությունը թե կենտրոնում և թե տեղերում համաձայնեցնում է աշխատանքների իր նախագիծը հաշվետվության ժամանակաշրջանի համար՝ կենտրոնում—քաղաքական լուսավորության Գլխավոր

Վարչության հետ, իսկ բաժանմունքները—տեղական քաղաքական լուսավորության վարչությունների հետ։

Ծանոթություն. Տեղական բաժանմունքի վարչության մեջ վճռող ձայնի իրավունքով մտնում է քաղաքական լուսավորության վարիչը (կամ նրա լիազորը), իսկ թեմական բյուրոյի մեջ—թեմական խրճիթ—ընթերցարանի վարիչը։

VI. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՑԵՎ ՆՐԱ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐԻ ԼԻԿՎԻԴԱՑԻԱՆ

§ 42. Ընկերության տեղական բաժանմունքների լիկվիդացիայի մասին վորոշում հանում է կոնֆերենցիան ձայների $^2/_3$-ով. ամբողջ ընկերության լիկվիդացիան կատարում է Համավրաստանյան Համագումարը՝ ամբողջ ընկերության անդամների ձայների $^2/_3$-ով և կառավարական մարմինների կարգադրությամբ։

§ 43. Անգրագիտության դեմ պայքարող ամբողջ ընկերության լիկվիդացիայի դեպքում նրա ամբողջ գույքը պատկանում է քաղաքական լուսավորության Գլխավոր Վարչության և նրա՝ տեղերում գտնվող մարմինների սեփականությունն։

§ 44. Ընկերության տեղական բաժանմունքների փակվելու դեպքում բաժանմունքների գույքն անցնում է նրանից վերև գտնվող բաժանմունքին (այսինքն թեմականից—գավառականին, գավառականից—կենտրոնականին)։

ՆՇԱՆԱԲԱՆՆԵՐ

ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐՋ ՏԱԼՈՒ ԱԳԻՏԱՑԻՈՆ ՊԱՅՔԱՐԻ ԱՌԻԹՈՎ

Մենք՝ ինչ գնով էլ լինի՝ պետք է դնենք մեզ յերեք նպատակ. նախ—սովորել, յերկրորդ—սովորել, յերրորդ—սովորել։

Լենին

—

Միանանք մի բուռն ձգտման մեջ—հաղթահարենք խավարը, զինենք յուրաքանչյուր բանվորին ու գյուղացուն գիտության զենքով։

Կրուպսկայա

—

Խայտառակություն կլինի, յեթե մինչև Կարմիր Հոկտեմբերի 10-րդ տարեդարձը մենք ամենքս չկարողանանք կարդալ նրա նշանաբանները։

—

Միացնենք բանվորների ու գյուղացիների ջանքերը անգրագիտության դեմ վարվող պայքարում։

—

Գրագետ, դու պարտք ունես վճարելու անգրագետներին, վճարիր պարտքդ, սովորացնելով նրանց։

—

Յեթե կամենում եք բարձրացնել գործարանի արտադրականությունը՝ բացեք նրանց կից գրագիտության դպրոց։

—

Անգրագետն արժանի չէ պրոֆիլության անդամ լինելու։

—

Վոչ թե մաղթանքը, այլ գրագիտությունն ու գիտությունը կբերեն մեզ յերաշտից։

—

Այնտեղ, վորտեղ, անգրագետը մի հասկ ունի, գրագետն յերկու ունի։

—

Զինվիր, ընկեր, գիտությամբ, ինչպես զու զինվեցիր վինտովկայով։

—

Անգրագետ կանայք համարյա յերեք անդամ ավելի յեն տղամարդկանցից. նրանք յերեք անդամ ավելի պետք է լիրեն լիկվիդացիոն կետում։

—

Միմիայն գրագետ մայրը կարող է լինել իր յերեխայի նեցուկը։

—

Կաց։ Դու անդամագրվի՞ր ես արդյոք «Անգրագիտության դեմ պայքար մղող Ընկերության»։

—

Գրագետ, ոգնիր անգրագետին, անդամագրվիր «Անգրագիտության դեմ պայքար մղող Ընկերության»։

—

Ամեն մարդ պետք է ոգնե Իլիչի պատվերները իրագործելուն, պետք է դառնա «Անգրագիտության դեմ պայքար մղող Ընկերության անդամ։

—

Խավարը, տգիտությունն ու անգրագիտությունը մի պատվար են դեպի կոմունիզմը տանող ճանապարհի վրա։ Քանդենք այդ պատվարը—արագացնենք կոմունիզմի հաղթանակը։

—

Ամենքս հանդես գանք անգրագիտության դեմ։

—

Անգրագիտությունը կարող է քանդել Խորհրդային Միության տնտեսական շինարարությունը։

—

Վոչ վոքի համար յերբեք ուշ չէ թոթափել իրանից անգրագիտության խայտառակությունը։

—

Ամոթ է Խորհրդային Հանրապետության տեր բանվորի ու բանվորուհու, գյուղացու և գեղջկուհու համար՝ չիմանալ գրել-կարդալ։

—

Անգրագիտության լիկվիդացիան մի կապ է քաղաքի ու գյուղի միջև։

—

Մենք ամեն ինչ կարող ենք անել, յերբ գրագետ լինենք։

—

Մենք պետք է սովորենք, վորպես զի հաղթենք և պետք է հաղթենք, վորպես զի սովորենք։

ՆՇԱՆԱԲԱՆՆԵՐ

ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐՋ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ

Պետական շինարարության գիտակցաբար մասնակցելու համար պետք է ամենից առաջ սովորել գրագիտություն և, ակտիվ կերպով աշխատելով «Ծեր-

կումի Ընկերության մեջ, դուրս պոկել դարավոր խավարի արմատները։

—

Անգրագետ կանայք ավելի շատ կան, քան տղամարդիկ. սովորող կանայք ավելի քիչ են, քան տղամարդիկ։ Կանայք, գնացեք լիկվիդացիոն կետեր, անդամագրվեք «Ծերկումսի» Ընկերության, ժամանակ է վերջ տալ անգրագիտության։

—

Ցերիտասարդության շարքերում չպետք է լինեն անգրագետներ և անտարբերներ անգրագետների վերաբերությամբ։ Կոմերիտմիությունն, ուղարկիր քո անգրագետներին լիկվիդացիոն կետեր և ոգնիր դրանց, անդամագրվելով «Ծերկումսի» Ընկերության։

—

Գրագիտություն սովորելը քիչ է, պետք է լրացնել այն։ Գրագիտություն սովորածներ, գնացեք գրադարաններ, ակումբներ, խրճիթ-ընթերցարաններ, ամրապնդեցեք ձեր գրագիտությունը, անդամագրվեցեք «Ծերկումսի» Ընկերության—նա ձեզ կը հասցնե ծրագրված նպատակին։

—

Անգրագիտության լիկվիդացիան միմիայն լուսավորության մարմինների գործը չե հանդիսանում, դա—ամեն մի կազմակերպության և ամեն մի գրագետ քաղաքացու գործն է։ Ամենքս հանդես գանք անգրագիտության դեմ պայքար մղելու, վորպեսզի կատարենք Իլիչի պատվերը. ամենքս եվ մտնենք «Ծերկումսի» Ընկերության շարքերը։

—

Հասակավորների անգրագիտության դեմ աչող պայքար մղելը—յերեխաների դպրոցի լավագույն գրավականն է։ Գրագետ ծնողները գրագետ վորդիք են ունենում։

—

«Ծերկումսի» Ընկերությունը—Հոկտեմբերի զավակն է, մասսայական խորհրդային հասարակության ստեղծագործման կենտրոնը։ Ամենքս անդամագրվենք «Ծերկումսի» Ընկերության։

—

Հառաջ—դեպի համաժողովրդական մեծ պատերազմ անգրագիտության դեմ։ Ամենքս գնանք «Ծերկումսի» Ընկերություն։

—

Պետք է աշխատենք, վոր կարդալ իմանալը ծառայե կուլտուրայի բարձրացման, վոր գյուղացին հնարավորություն ստանա գործադրելու այդ գրել-կարդալ իմանալն իր տնտեսությունն ու պետությունը բարելավելու համար։

—

Կոմերիտմիությունական, յեղիր առաջին հրացան արձակողը անգրագիտության դեմ։

—

Գյուղացիական տնտեսությունը բարձրացնելու համար հարկավոր է բարձրացնել գյուղացիների ինքնագործունեությունը։ Այդ անհնարին է անել առանց գրագիտության, առանց գյուղացության գիտակցությունն ավելացնելու, առանց նրա կուլտուրականությունը բարձրացնելու։ Լենին

—

Անգրագետը չե կարող-նրը կյանք ստեղծել, վորովհետև նրան կապված են խրճիթի ու գիտու-

ГОС. БИБЛИОТЕКА ՀՍՍՌ-Ում СССР
БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ИСКУССТВОЗНАНИЯ Академии Наук СССР

թյան շղթաները։ Փշրենք այդ շղթաները լիկվիդացիոն կեաերով։

—

Անգրագիտությունը մի յերկրի գերագույն անկուլտուրականության արտահայտությունն է։

Լենին

Պետք է, վոր գյուղացության լայն շրջանները ցավագին կերպով զգան անգրագիտության դեմ պայքարելու անհրաժեշտությունը։

Կալինին

—

Պետք է ցույց տալ բանվորներին ու գյուղացիներին, վոր անգրագիտության դեմ մղվող պայքարը վոչ միայն մեքենացնում է տեխնիկական անգրագիտությունը, այլ նաև բարձրացնում է գյուղացիական մասսաների ընդհանուր կուլտուրական մակերեույթը, իսկ դա բարձրացնում է գյուղացության նյութական և տընտեսական բարոբությունը։

—

«Ծերկոմսի» Ընկերության պետք է անդամագրվեն գյուղի բոլոր գիտակից խավերը և, գլխավորապես, չքավոր մասը։

Կալինին

—

Անգրագիտության լիկվիդացիայի ճանապարհին հանդիպող բոլոր խոչընդոտները կըհաղթահարվեն այն գիտակցությամբ, վոր մենք կատարում ենք այնպիսի մի ահագին սկզբունքային գործ, վորն իր նմանը չունի։

Կալինին

53.591